

ԼՂԻՄ. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ինչպես արդեն հաղորդվել է, հուլիսի 21-ին, օրվա երկրորդ կեսին, տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ ժամանած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի անդամների հանդիպումը Ստեփանակերտ քաղաքի կուսակցական-տնտեսական ակտիվի հետ:

Հանդիպումը անբաժանելի խոսքով բացեց կուսակցության քաղկոմի առաջին քարտուղար Վալերի Աթաջանյանը:

Հանդիպման ժամանակ ելույթ ունեցողները՝ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի անդամ, մարզի ժողովրդական վերահսկողության կոմիտեի նախագահ Վլադիմիր Թովմասյանը, միութենական նշանակության անհատական կենսաթոշակատու Շմավոն Պետրոսյանը, կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի պրոռեկտոր Երվանդ Բաղդասարյանը, № 9 շինարարական տրեստի կառավարիչ Ռուդոլֆ Իսրայելյանը, արհմիությունների մարզային խորհրդի նախագահ Սերգեյ Դավթյանը, կոշիկի ֆաբրիկայի բանվորուհի Լիդիա Նեսպրավան, ինստիտուտի դասախոս Գրիգոր Աթանասյանը, էլեկտրատեխնիկական գործարանի ղեկավար Բորիս Առուշանյանը և մյուսները կոնկրետ փաստերով

բացահայտեցին ղարաբաղյան հարցի ծագման պատճառները: Ընդամենը արանք ընդգծեցին, որ իր կյանքից մարզի հայ բնակչության դժգոհությունն առաջացրած հիմնական գործոնը եղել է այն քաղաքականությունը, որը վարել և վարում է Ադրբեջանի ղեկավարությունը ԼՂԻՄ-ի մկատմամբ, լինի դա էկոնոմիկայի, մշակույթի, ժողովրդական կրթության և առողջապահության, թե կադրերի ընտրության ու տեղաբաշխման ոլորտում և այլն:

Այդ քաղաքականությունը կարելի է բնորոշել որպես հաշկական ինքնավար կազմավորման իրավունքների ու շահերի նպատակասլաց ոտնահարում, որի բուն գոյությունը 20-ական թվականների սկզբների աններելի պատմական սխալներից է: Սակայն ամենաաղաղակող երևույթը դա նույն ժողովրդի երկու մասերի արհեստական օտարացման փաստն է և որոշ ադրբեջանցի պատմաբանների հետագա փորձերը՝ ապացուցելու անապացուցելին, այսինքն այն, որ Լեռնային Ղարաբաղի հայերը բնավ էլ հայեր չեն:

Ինչպես նշեցին հոետորները, այս ամենն արվում է մեկ նպատակով՝ վիրավորել երկրամասի բնակչության գերակշիռ մեծամասնության ազգային ինքնասիրությունը և նրանց ստիպել թողնելու իրենց նախապապերի հողը: Քանզի ժողովրդագրական ի-

րավիճակի փոփոխումը հարուստ ադրբեջանական կողմի օրակարգից կվերացնի Լեռնային Ղարաբաղի պրոքլեմի Ահա թե ինչու ժողովրդի կատարած ընտրությունը, որ միանշանակ կերպով արտացոլվեց մարզխորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի որոշման մեջ, արցախյան հարցում հայ ժողովրդի հետագա գոյատևման միակ պայմանն է: Դա Լեռնային Ղարաբաղի վերամիավորումն է Հայկական ԽՍՀ-ի հետ:

Հանդիպման մասնակիցները ընդգծեցին, որ ԼՂԻՄ-ի բնակչությունը երբեք ևս հարգալից չի վերաբերվել ադրբեջանական ժողովրդին սխատրաստ է ապրել և աշխատել նրա հետ կողք-կողքի: Ինչպես հավաստիք հավաստի հետ: Լեռնային Ղարաբաղի աշխատավորները հանդես են գալիս պրոքլեմի լուծման դեմոկրատական, սահմանադրական ուղու օգտին, որի հիմքում դրված է ազգերի ինքնորոշման իրավունքի լեռնային սկզբունքը: Սա է վերակառուցման պահանջը:

ԼՂԻՄ-ի հայ ժողովրդի ձրությունը, որը սրբորեն մվիրված է մեր հասարակության հեղափոխական նորացման գործին:

Հուլիսի 22-ին հանձնաժողովի որոշ անդամներ ծանոթացան մարզային մանկական հիվանդանոցին և լսեցին դրա աշխատակիցներին: Խորհրդային պատլամենտի մյուս պատվիրակները մեկնեցին Մարտակերտի շրջան:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ